

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Էլեկտրական մեքենաների և ապարատների տեխնիկ
I. Դերը	Էլեկտրական մեքենաների և ապարատների տեխնիկը կազմակերպություններում և հիմնարկներում զբաղվում է էլեկտրական մեքենաների և ապարատների շահագործման մեթոդների մշակմանն ու կիրառմանն առնչվող տեխնիկական խնդիրներով, անվտանգության հարցերով, հսկում և շահագործում է էլեկտրական մեքենաներն ու ապարատները:
II. Խնդիրների բնագավառները	<ul style="list-style-type: none"> - Հետազոտել էլեկտրական սարքավորումները - Փորձարկել էլեկտրական սարքավորումները - Իրականացնել տեխնիկական օգնություն - Մշակել էլեկտրական սխեմաների ուրվագծեր - Հսկել էլեկտրական սարքավորումների շահագործումը - Բացահայտել էլեկտրական սարքավորումների անսարքությունները - Վերացնել էլեկտրական սարքավորումների անսարքությունները - Տեղակայել էլեկտրական սարքավորումներ - Կատարել հաշվարկներ - Կազմել փաստաթղթեր
Խնդիրների բնագավառ 1	Հետազոտել էլեկտրական սարքավորումները
Աշխատանքային գործընթացը	Ռեսուրսահարկել սարքավորումների բնութագրերը, կատարել դրանց արտաքին և ներքին զննում, կոնկրետ իրավիճակներով թելադրվող անհրաժեշտ չափումներ՝ յուրաքանչյուր դեպքում կիրառելով համապատասխան գործիքներ ու սարքեր:
Կատարման չափանիշները	Մարքավորման, դրանց համապատասխան հանգույցների վերաբերյալ առկա է սպառիչ և հիմնավոր տեղեկություններ:
Խնդիրների բնագավառ 2	Փորձարկել էլեկտրական սարքավորումները
Աշխատանքային գործընթացը	Հստակ սահմանել փորձարկման նպատակը, ապահովել փորձարկման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ պայմանները, սահմանել փորձարկման ռեժիմները, յուրաքանչյուր ռեժիմում փորձարկման տևողությունը, ընթացակարգերը, կատարել փորձարկում կամ հսկել այլ աշխատողների կողմից դրա իրականացումը, ամփոփել փորձարկման արդյունքները՝ տալով անհրաժեշտ գնահատական:
Կատարման չափանիշները	Փորձարկման աշխատանքները կատարելու համար պայմաններ, աշխատանքներն արդյունավետ կատարելու այլ նախապատրաստական գործողություններ ապահովված և կատարված են, սարքավորման վերաբերյալ ստացվել են փորձարկման գործընթացով պահանջվող տեղեկությունները դրանք ձևակերպված են համապատասխան ձևով:
Խնդիրների բնագավառ 3	Իրականացնել տեխնիկական օգնություն
Աշխատանքային գործընթացը	Իր ենթակայությամբ աշխատողներին, անհրաժեշտության, կամ սարքավորումների տեխնիկական շահագործման փաստաթղթերով նախատեսված դեպքերում՝ նաև շահագործողներին բացատրել զծագրեր, սխեմաներ, պարզաբանել սարքավորումների նորոգման, շահագործման, տեղակայման, փորձարկման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական խնդիրները:
Կատարման չափանիշները	Տեխնիկական օգնություն պահանջող բոլոր իրավիճակների վերաբերյալ աշխատողները ստացել են համապատասխան օգնություն, աշխատանքները կատարելիս նրանք ունենալու են անհրաժեշտ ուղղորդիչ տեղեկություններ, աշխատանքի ընթացքում չնախատեսված իրավիճակներ չեն առաջանում կամ քիչ են առաջանում:
Խնդիրների բնագավառ 4	Մշակել էլեկտրական սխեմաների ուրվագծեր

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Սահմանել էլեկտրական սխեմայի տիպը, հիմնավորել աշխատելու հնարավորությունը, ընդհանուր շղթայի այլ բաղադրիչների հետ համատեղելիությունը, կատարել սխեմայի ուրվագիծը՝ օգտագործելով դետայների պայմանական նշանները:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<p>Մշակված էլեկտրական սխեման բավարարում է ներկայացվող տեխնիկական պահանջներին, կատարված է գրագետ, օգտագործված են միայն ընդունված պայմանական նշանակումներ, սխեման ուրվագծված է առավել արդյունավետ տարբերակով:</p>
<p>Խնդիրների բնագավառ 5 Հսկել էլեկտրական սարքավորումների շահագործումը</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Իր իրավասության շրջանակներում մշակել սարքավորումների շահագործման վերաբերյալ հրահանգչական փաստաթղթեր, կատարել սարքավորումների շահագործման ընթացքի հետ կապված ստուգումներ, հետևել շահագործման սահմանված ռեժիմների պահպանմանը, տեխնիկական սպասարկման միջոցառումների ժամանակին կատարմանը, անվտանգության կանոններով նախատեսված պայմանների պահպանմանը, կատարել անհրաժեշտ շտկումներ:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<p>Էլեկտրական սարքավորումների շահագործման ընթացքում սահմանված պայմաններից շեղումներ չեն նկատվում, անվտանգության կանոնները պահպանվում են, ձեռնարկության համապատասխան օղակները իրագեկված են իրավիճակի մասին, սարքավորումները նորմալ են աշխատում:</p>
<p>Խնդիրների բնագավառ 6 Բացահայտել էլեկտրական սարքավորումների անսարքությունները</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Համապատասխան մասնագիտական գործողությունների միջոցով բացահայտել տվյալ սարքավորման անսարքության բնույթը, ծավալը, բարդությունը, պատճառը, գնահատել վերացման հնարավորությունը, աշխատանքների կատարման տեղը, կամ կազմակերպել անսարքությունների բացահայտման աշխատանքները:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<p>Սարքավորման անսարքությունը բացահայտված և գնահատված է, դրա վերացման հետագա աշխատանքների վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը տրված է:</p>
<p>Խնդիրների բնագավառ 7 Վերացնել էլեկտրական սարքավորումների անսարքությունները</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Սահմանել սարքավորման նորոգման աշխատանքների կատարման հաջորդականությունը, նորոգման ենթակա սարքավորումը տեղափոխել արհեստանոց, անջատել անսարք հանգույցը կամ դետալը, տեղադրել նորը, կատարել միջանկյալ ստուգումներ, հավաքել սարքավորումը, ստուգել նրա աշխատանքը՝ կամ կանոնակարգել աշխատանքների կատարումը ենթակայաների կողմից:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<p>Սարքավորման անսարքությունը վերացված է և այն աշխատում է նորմալ:</p>
<p>Խնդիրների բնագավառ 8 Տեղակայել էլեկտրական սարքավորումներ</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Գնահատել սարքավորման տեղակայման վայրը, տեղադրել և ամրացնել սարքավորումը՝ պահպանելով բոլոր կանոնները, միացնել աշխատանքային այլ սարքավորումների, ստուգել սարքավորման աշխատանքը ընդհանուր շղթայում:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<p>Ըստ հանձնարարականի սարքավորումը տեղակայված է, ընդհանուր շղթայում այն նորմալ աշխատում է:</p>
<p>Խնդիրների բնագավառ 9 Կատարել հաշվարկներ</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Հավաքագրել, նախապատրաստել տվյալներ իր պարտականություններով պայմանավորված իրավիճակների վերաբերյալ, խմբավորել և ամփոփել տվյալները, կատարել համապատասխան</p>

	հաշվարկներ:
Կատարման չափանիշները	Հաշվարկված է նյութերի, գործիքների անհրաժեշտ քանակությունը, աշխատանքների կատարման տևողությունը, պահանջվող ֆինանսական միջոցները:
Խնդիրների բնագավառ 10	Կազմել փաստաթղթեր
Աշխատանքային գործընթացը	Իր գործունեության վերաբերյալ տվյալները ձևակերպել տվյալ կազմակերպությունում ընդունված փաստաթղթերի տեսքով:
Կատարման չափանիշները	Լրացված են պահանջագրեր, կազմված են հաշվետվություններ, ամփոփագրեր, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր, ընդունման հանձնման ակտեր, տեխնիկական հսկողության փաստաթղթեր:

III. Էլեկտրական մեքենաների և ապարատների տեխնիկի պատասխանատվության շրջանակները

Էլեկտրական մեքենաների և ապարատների տեխնիկը պատասխանատու է իր սպասարկման գոտում գտնվող էլեկտրական սարքավորումների նորմալ և անխափան աշխատանքի համար, շահագործման պայմանների պահպանումն ապահովելու համար, սարքավորումները ճիշտ տեղակայելու համար, դրանց նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ կատարելու համար, ենթականերին և շահագործողներին անհրաժեշտ տեխնիկական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու համար, նյութական միջոցները խնայողաբար օգտագործելու համար, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումն ապահովելու համար, համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու համար, ենթակաների աշխատանքը կազմակերպելու և աշխատանքային կարգապահությունը ապահովելու համար:

IV. Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վերաբերմունք

Լեզուները

Հայոց լեզու ցերեզանց
Առաջին օտար լեզու քավարար
Երկրորդ օտար լեզու քավարար

Համակարգիչը

MS Word, Excel - քավարար
Internet Explorer` քավարար

Գիտելիքը

Գծագրություն
Չափագիտություն
Էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի հիմունքներ
Էլեկտրատեխնիկական նյութեր
Էլեկտրատեխնիկական սարքավորումներ և գործիքներ
Արտադրության կազմակերպում, էկոնոմիկա և կառավարում

Կարողությունները և հմտությունները

Կարողությունները

Աշխատանքային տեղամասում աշխատակիցների գործունեությունը կազմակերպելու, նրանց հնարավորությունները ճիշտ օգտագործելու կարողություն, իրավիճակին համապատասխան մասնագիտական տեղեկությունների խումբը սահմանելու կարողություն, առկա տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարելու կարողություն, աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակները ընտրելու կարողություն, փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ ընդունելու կարողություն, վերլուծություններ կատարելու կարողություն:

Հմտությունները

Էլեկտրատեխնիկական գործիքներն ու սարքերը օգտագործելու հմտություն, էլեկտրական շղթայի, էլեկտրական սարքավորումների պարամետրերը չափելու հմտություն, սարքավորումների անսարքությունների վերացման, փորձարկման աշխատանքներ կատարելու, սարքավորումները տեղակայելու հմտություններ, հաշվարկներ կատարելու հմտություն, նորմատիվ փաստաթղթերից, ստանդարտներից և տեխնիկական պայմաններից օգտվելու հմտություն, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելու հմտություն:

Վերաբերմունքը և վարքագիծը

Պարտաճանաչ, կարգապահ, ուշադիր, զգույշ, դիտողունակ, քննադատական մտածելակերպ ունեցող, համագործակցելու պատրաստ, հանդուրժող, շփվող, նորն ընդունող, հետաքրքրվող:

Միջին մասնագիտական կրթության «Էլեկտրական մեքենաներ և ապարատներ»

մասնագիտության «Տեխնիկ» որակավորմամբ մասնագետի գնահատման չափանիշները

«Էլեկտրական մեքենաներ և ապարատներ» մասնագիտության «Տեխնիկ» որակավորմամբ մասնագետի գնահատումը իրականացվում է հետևյալ չափանիշների սահմաններում.

- Ըստ հանձնարարականի հետագոտի էլեկտրական սարքավորումները և դրանց համապատասխան պարամետրերի վերաբերյալ ստացված արդյունքները ձևակերպի ընդունված կարգով:
- Ըստ հանձնարարականի կատարի էլեկտրական սարքավորումների, դրանց առանձին հանգույցների փորձարկման գործողություններ՝ պահպանելով սահմանված կանոնները և գործընթացները, ձևակերպի փորձարկման արդյունքները:
- Բնութագրի և բացահայտի էլեկտրական սարքավորումների անսարքությունները և դրանց պատճառները, գնահատի անսարքության վերացման հնարավորությունը, հիմնավորի անսարքության վերացման ընտրված ձևի նպատակահարմարությունը:
- Վերացնի էլեկտրական սարքավորումների անսարքությունները:
- Օգտագործելով համապատասխան չափիչ, ստուգիչ սարքերը կատարի չափումներ, ստուգումներ:
- Կազմի էլեկտրական սարքավորումների շահագործման պայմանների, կարգի, ռեժիմների մասին փաստաթղթեր:
- Ըստ իրավիճակների կազմի հրահանգավորման փաստաթուղթ:
- Ըստ հանձնարարականի գծագրի ուրվագծեր և գծագրեր:

- Կատարի մասնագիտական հաշվարկներ:
- Ձևավորի և լրացնի հաշվետվություններ:
- Ըստ հանձնարարականի տեղակայի էլեկտրական սարքավորումները, հիմնավորի իր գործողությունները:
- Ըստ պայմանների ճիշտ օգտագործի էլեկտրատեխնիկական նյութերը:
- Ցուցաբերի գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումներին և զարգացումներին տեղեկացվածություն:

Նշված չափանիշների սահմաններում ուսանողը կարող է ստանալ որակավորումը, եթե գործնական հանձնարարությունները կատարում է ամբողջությամբ և անսխալ, բացատրությունների և պարզաբանումների հարցերում կարող է թույլ տրվել ոչ էական թերություններ ու բացթողումներ: